

նել Բուսմիսիայի կառավարութեան հայեացք-
ները այդ խնդրի վրայ:

Մի նշանաւոր կէտ կայ, որի վրա կամե-
նում եմ դարձնել ձեր ուշադրութիւնը: Ռուս-
սաց շրջաբերականի մէջ ասված էր, որ Բե-
սարաբիան Ռուսաստանին յանձնող և նոր
սահմանները որոշող հաւատարմութեանը
կարող են Բուսմիսիային յանձնել Գորբուշայի
մասը: Ի՞նչ պատճառներով մէջ ես յարմար գը-
տայ չեմ կոչել այդ կէտին հետեւել պատ-
ճառներէն զրոյթ: Ռուսաստանը Գորբուշայի
վրա չունի ոչ սեփականութեան և ոչ պե-
տութեան իրաւունք, այլ միայն գրաւած ու-
նի այդ երկիրը զինուորական ուժով: Այդ է
պատճառը, որ Բուսմիսիան այդ երկիրը պէտք
է չը ստանայ Բուսմիսիայի և Ռուսաստանի
մէջ կայացած համաձայնութեան հիման վրա:

Բուսմիսիան ստանում է Գորբուշա ոչ թէ Ռու-
սաստանից, այլ Ներսիսից: Հարկաւորու-
թիւն չը կայ այժմ ցոյց տալ ապագայի մէջ
ծագելի որ և է անկարգութեան նախատե-
սելու անհրաժեշտութիւնը: Նրկու գործերի,
այսինքն Բեսարաբիան Ռուսաստանին տալը
և Գորբուշայի ստանալը, միաժամանակ կա-
տարելը ցոյց կը տար, որ այդ երկու գոր-
ծողութիւններն մէջ կայ ընդհանրութիւն:

Այդ կը նշանակէր վերադառնալ երկրներն
փոխարինութեան մոքին, որ Բուսմիսիան միշտ
մերժել է և այժմ էլ մերժում է և որ ան-
տես է առած Բերլինի կոնգրէսից: Ձեզ յայ-
տնի է, պ. գործակալ, որ եթէ այդ մասին
որ և է երկմտութիւն ծագի, Գորբուշայի
ընդունելը Բուսմիսիայի համար անկարելի կը
լինի: Եթէ Բուսմիսիան, կատարելով Բերլինի
դաշնագիրը, կը հպատակվի Ներսիսի կամքին
և կը համաձայնվի փոփոխել իր երկիրները,
այնու, ամենայնիւ ոչ ոք չէ կարող ստիպել
նրան հետեւել Սան-Ստեփանոյի դաշնագրին:

Մինչդեռ եթէ մենք գործէինք ռուսաց շըր-
ջաբերականի որոշած պայմաններն համեմատ
այդ կը նշանակէր դուրս գալ Բերլինի դաշ-
նագրի որոշած շրջանից և վերադառնալ Սան-
Ստեփանոյի դաշնագրին, որ մերժված է կօն-
գրէսից: Ռուսաստանի ցանկութեան վերաբե-
րութեանը անյապաղ տոտնալ Բեսարաբիան
ի նկատի ունեցէ՛ք, պ. գործակալ, որ այդ
դէպքում մենք չենք կարող սպասել ազգային
ժողովի գումարակցուն: Մենք ստիպված ենք
համբերել գործերի այն դրութեանը, որ ստեղ-
ծել է մեզ համար Բերլինի դաշնագիրը: Խըն-
դում եմ այդ կէտի վրա միայն հարկաւոր
դէպքում և մեծ զրուշուրութեամբ ուշադրու-
թիւն դարձնել տալ: Ի նկատի ունեցէ՛ք, պ.

գործակալ, նոյնպէս և այն հանգամանքը, որ
եթէ Ռուսաստանը անպատճառ կամենայ ստա-
նալ Բեսարաբիա ազգային ժողովի գումարակց-
ւոց առաջ, օրէնսդիր ժողովը ստիպված կը լի-
նի մի կողմից միջոցներ որոնել Գորբուշա գրա-
ւելու համար, միւս կողմից քննել իրաւունք-
ների հաւաստութեան խնդիրը: Գորբուշայի
վերաբերութեամբ կառավարութեան յայտնի
իրաւունքները կը տար: Իրաւունքների հաւա-
սարութեան վերաբերութեամբ ազգային ժո-
ղովը, կառավարութեան առաջարկութեամբ
կը գործէ օրէնսդիր կարգով, սահմանադրու-
թեան համեմատ: Ինչպէս սովորական օրէնս-
դիր ժողովն այժմեան ազգային ժողովը կա-
րող է քննադատել և հաստատել ամեն տե-
սակ իրաւունքներ բացի քաղաքական իրա-
ւունքներից: Նա պէտք է վճռէ, որքեօք
հարկաւոր է հրաւիրել հիմնադիր ժողով
սահմանադրութեան եօթնորդ յօդուածը
քննելու համար: Նկողութիւն յանձն առէ՛ք,
պ. գործակալ, հարկաւոր եղած դէպքում
տեղեկացնել ում հարկ կը լինի, որ մեր օրէն-
քների համեմատ միայն հիմնադիր ժողովը
իրաւունք ունի ընդարձակել քաղաքական ի-
րաւունքները, իսկ հիմնադիր ժողովի հրաւի-
րել անկարելի է, քանի որ երկրի մէջ օտար
զօրքեր կան: Սարսափելի բան կը լինէր, եթէ

Ներսիսի մեզ անպայման անկախ պետու-
թիւնների շարքը դասելով, ստիպէր մեզ
սկսել նոր կեանք մեր սահմանադրական օրէն-
քները զեղծելով:

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Բուսմիս-
կան կառավարութեան և ժողովրդի խնդրի
համեմատ իշխան Կարլ ընդունեց զարգայա-
պէս ճանաչված է Աւստրո-Ունգարիայից,
Իտալիայից և Անգլիայից: Բուսմիսիան կա-
ռավարութեան պաշտօնական տեղեկագրին,
այդ հարցին վերաբերութեամբ Ֆրանսիան,
Իերմանիան և Ռուսաստանը գեղ չեն պա-
տախանել:

ՌՈՒՍԱՅ ԶՕՐԲԵՐԻ ՀԵՌԱՆԱԼԸ ՍԱՆ-
ՍՏԵՓԱՆՈՅ

«Полное» լրագրի թղթակիցը գրում է
հետեւեւ ռուսաց զօրքերից Սան-Ստեփանո
դատարկելու մասին:

Սան-Ստեփանոյի դատարկելը կարելի է կա-
տարված իրողութիւն համարել: Կիրակի, սեպ-
տեմբերի 10-ին, ռուսաց վերջին զինուորը
թողեց այդ պատմական տեղը: Առաւօտեան
ժամի հինգին ռուսաց երեք շտաբներ
զօրքերով բռնաւորված հեռացան ամիրից
դէպի ծովը: Մի և նոյն ժամանակ զօրքերի
միւս մասերը երկար կօշտներով ուղեւորվե-
ցին դէպի Ագրիանոօզը: Վերջապէս Սան-Ստե-
փանոյում մնաց մի ռուս գնդապետ մի քանի
կազակների հետ երկիրը թիւրքաց իշխա-
նութեան յանձնելու համար: Սան-Ստե-
փանո նորից գրաւելու պատուին արժանացաւ
Ֆուադ-փաշա: Մուշերը թիւրքաց հեծելա-
զօր և հետեւեւ զօրքերի հետ սպասում էր
երկրի դատարկելուն մի փոքրիկ առօրի ափի
վրա, որ բաժանում էր երկու զօրաբանակ-
ները: Թիւրք բոլոր օֆիցերները և զինուոր-
ները անհամբերութեամբ սպասում էին գրա-
ւելու այն տեղը, որտեղից այդքան ժամանակ
նրանց սպանում էին ռուս թնդանօթները:

Վերջապէս ժամի երկուսին կէսօրից յետոյ
Ֆուադ-փաշա ռուս գնդապետի հրաւերքով
անցաւ առուակը:

Ֆեդուպետը ընդունելով փաշային ասաց
նրան. «Ե՛նձ յանձնած է ձեզ գրկախառնու-
թեամբ ընդունելը»—«Ե՛նձ չեմ կասկածում, պա-
տախանեց Ֆուադ-փաշա»—«Ե՛նձ հրամայած
է յանձնել ձեզ երկիրը» աւելցրեց գնդա-
պետը, «այդ անելուց յետոյ ի՞նչ մնում է հե-
ռանալ»: Այդ օրաքերից յետոյ գնդապետը
իր կազակների հետ ուղեւորվեց դէպի Ագ-
րիանոօզը: Ֆուադ-փաշա ռուս գնդապետի
խնդրով համեմատ խոստացաւ ոչ թէ միայն
պահպանել ռուս զինուորների գերեզման-
ները, այլ և վերաբերվել նրանց այնպէս,
ինչպէս պահանջում է պատիւը դէպի հան-
գուցեալների յիշատակը:

Սան-Ստեփանո գրաւելուց յետոյ Ֆուադ-
փաշայի առաջին զօրքը եղաւ փակել իտա-
լական օպերայի թատրոնը, որտեղ Պետեր-
բուրգից եկած մի երգչուհի հիանում էր
իր տաղանդով Սան-Ստեփանոյում գտնվող
ռուս զօրաբաժնին: Այդ կարգադրութիւնը
խկապէս աւելրդ էր, որովհետեւ գեղեցիկ
թուշիկը արդէն հեռացել էր իր ընկեր երի-
տասարդ օֆիցերների և բժիշկների հետ:
Որովհետեւ մի քանի տներում բնակվում էին
ռուս օֆիցերներ, տանտերերին հրամայեցին
դատարկել և լուսնալ ամբողջ բնակարանը,
որպէս զի անհաստեների հեռքերը անգամ
չը մնան:

Ֆեդուպետը Տօլէբէնի գլխաւոր բանակը
այժմ տեղափոխված է Ագրիանոօզը: Զօր-
քերի մի մասը Սան-Ստեփանոյից ուղեւոր-
վում է դէպի այդ քաղաքը: Գնեւորվել մի
քանի օր առաջ ինքն գնաց Ագրիանոօզը
հաւաստիանալով թէ արդեօք կատարվել են իր

կարգադրութիւնները թէ ոչ: Այդ քաղա-
քում նա փառաւոր ընդունելութիւն գտաւ
թէ մահմետական և թէ քրիստոնէայ ազ-
գանակութեան կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Փոռն» լրագրի մէջ կարդում ենք. «Ան-
ցեալ ուրբաթ աւուր Բնդհանուր ժողովը ար-
դեւեքը հրատարակեցինք նախորդ թերթերով:
Նրկու օր ետքը, կիրակի ալ, ընդհանուր ժողով
մը գումարեցաւ: Վարկիւր ազգային մատենա-
դարանին մէջ, որոյ համար կանխաւ ազգային
լրագրաց մէջ ոչ խոշոր հրաւիրագրեր կային, ոչ
օրակարգ, ոչ ուրիշ պատրաստութիւններ, ոչ
ունկնդրաց բազմութիւն, ոչ գեներացի ու դեմ-
փակի խնդիրներ, Կիրակի աւուր ընդհանուր
ժողովը լուի մեջիկ գումարեցաւ առանց յառա-
ջացին փողեր գումարեցաւ: անդամները՝ թա-
ղերէ, գաւառներէ երկայն բարակ քուէարկու-
թեամբ ընտրեալ ազգային երեսփոխաններ չէին:
Բազմած չէին եկեղեցական բարձր. հայրեր, այլ
երկտասարդ ազգային, վառվռուն և աշխոյժ,
բայց առանց շատախօսութեան և կրից խորհր-
դակցեցան և որոշեցին դացին. որոշեցին որ
Վասայ մէջ Վարժապետանոց մը բացուի, այս
անուն երկտասարդ տեսուչ երկայ, և վարժա-
պետանոցին ծախուց համար միջոցով իրա յատ-
կանայ: Այս ընդհանուր ժողովը՝ Արարտեան
ընկերութեան է, որոյ գաւառաց մէջ ռուսում
ու կրթութիւն ծաւալելու նպատակ ունենալ, և
այս նպատակն ի գործ դնելու սկսած ըլլալը
արդէն ծանուցած եմք: Տ. Խրիմեան Սրբազան
կիրակի օրը այս ընդհանուր ժողովին ներկայ
գտնուել, քաջակերբ, օրհներ և բարեմաղթեր
է «Արարտեան ընկերութեան» համար: Խրի-
մեան Սրբազան ունեցածը տուել է. որիչ եկե-
ղեցական Հարք ալ պարտին տալ իրենց ունե-
ցածը, լուսնը օրհնութեան ու բարեմաղթութեան
հետ ոսկի և արծաթ ալ. այս՝ եկեղեցականաց
համար. իսկ աշխարհականը, ամեն կարգէ աշ-
խարհականը, պարտին ամենայն նպատակ ու օգ-
նութիւն մատուցանել՝ այս ընկերութեան նպա-
տակին անարգել և արդիւնաւոր գործադրութեան
համար: Այս ընկերութիւնը վարժարաններ բու-
ցած է արդէն Հայաստանի մէջ, և ահա հատ
մ'ալ կը բանայ. կը գործէ այս ընկերութիւնը,
և խօսքով չանցնել. ազգային ընդհանուր ժողով-
վին մեծ է և պատկառելի՝ այս ընկերութեան
ընդհանուր ժողովը, և արժանի է ամենայն քաջա-
ւերութեան և օժանդակութեան:»

«Times» լրագրին հաղորդում են Կ. Պօլսից,
սեպտեմբերի 30-ից, որ ծովագետ Զօրնի ծո-
ղագետութեանը իրմեց առաջարկութեամբ այն
բանի մասին, որ Ստեփանոյի և Գալիպօլի եւն
ցիցը անյարմար են ձմեռային կացութեան հա-
մար և որ, եթէ նաւատորմի մնալը Մարմարեան
ծովում անհրաժեշտ է, ուրիշմ նա պէտք է իջ-
միդան ծոցը ուղեւորվի ոչ ուշ, քան երկու ամ-
սից յետոյ:

«Times» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են
հոկտեմբերի 1-ից հետեւեալը. «Ստեփանոյի
հաստատում են, որ Խեյդելբերգ-էյ շուտով կը
ստանայ մուշերի կոշումը և կը նշանակվի մեծ
վիզիրի ընկեր. — գա մի այնպիսի աստիճան է
որ մինչև այժմ չը կար թիւրքաց կառավարու-
թեան մէջ. Նրան անկասկած սիրում է սուլ-
թանը, և շատերը նրա վրա նայում են, որպէս
այն մարդու վրա որը որովհետեւ արեւելի լաւ
կարող է հասկանալ կառավարչական մեծ վե-
րանորոգութիւնները. բայց մասնաւոր այն
պատճառով նրան յարմար են համարում այս
աշխատանքի համար, որովհետեւ նա մահմետա-
կան լինելով մի այնպիսի գրեթէ գրեթէ օրի մէջ
ապացուցանում է, որ ազատամիտ վերանորո-
գութիւնները հակառակ չեն կորսնիքն:»

«Երեսերի ընկերութեան» Կ. Պօլսից հե-
ռագրում են սեպտեմբերի 30-ից հետեւեալը.
«Գնեւորվել Սթեփանոյ մէջ շրջաբերականով զիմեց
ռուսներից գրաւած երկրի վրա գտնվող իշ-
խանութիւններին, որի մէջ ուղեւորվել է զինուո-
րական օրէնքներով պատժել այն բնակիչնե-
րին, որոնք կապտամբվին ռուսաց իշխանու-
թեան դէմ: Բ. Գուռը ևս նոյնպէս դրա նման
մէկ շրջաբերական է պատրաստում, նորերում
թիւրքաց զօրքերով կրկին գրաւած գաւառնե-
րում հրատարակելու համար:»

«Բէյութի ընկերութեան» Կ. Պօլսից, հոկ-
տեմբերի 1-ին ստացած հեռագրի խօսքերով,
Բ. Գուռը զիտաւորութիւն ունի Ռուսաստանի

հետ վերջնականապէս կապված խաղաղութեան
դաշնագիրը ներկայացնել պետութիւնների ջըն-
նութեանը: Պ. Լայարդը ընդգրկմանում է Բ. Գը-
րան թեւադրած զիտաւորութեանը Անգլիայի ա-
ռաջարկած թէֆօրմները փոքր-Ասիայի համար
տարածել բոլոր կայսերութեան մէջ: Լայարդ
զիտաւորութիւն ունի այցելել Արտակեան ծո-
ցում գտնվող անգլիական նաւատորմը և կամե-
նում է մնալ այնտեղ շորս օր: Կալվերթից հե-
ռագիր է ստացված, որը յայտնում է թէ Ֆիլիպ-
պօպօլի փողոցների վրա կանանց վերադարձ
են:

Լրագիրներին հաղորդում են, որ Հնդկաստանի
Ֆինանսական գրութիւնը մինչև այն աստիճան
վատ է, որ նրա կառավարութիւնը անկարող է
վճարել ապագայ պատերազմական ծախսերի
զոնէ մէկ բաժինը: Անգլիական կառավարու-
թիւնը ստիպված կը լինի Հնդկաստանին դրամ
փոխ տալ առանց տոկոսի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

ԲՕՄԲԵ, 29 սեպտեմբերի (11 հոկտեմ-
բերի): Ասում են, որ գնեւորվել Գոյներ կըն-
դունէ Պեշավերում գտնված 35,000 մարդուց
բաղկացած զօրաբաժնի գլխաւոր հրամանա-
տարութիւնը: Պատերազմական գործողու-
թիւնների սկսվել անսխալել է համարվում
Կարծում են, որ Ալեմուսկի կողմից կը գնա-
ւորվի բազմաթիւ թնդանօթներով Կարծում
էին դարձաւ, որ նշանաւոր թուով օգնա-
կան զօրքեր կուղարկվին Պեշավեր:

ԼՕՆԻՍ, 29 սեպտեմբերի (11 հոկտեմ-
բերի): «Standard» լրագրին Կալկուտայից հե-
ռագրում են, որ իբր թէ Պեշավերի զօրա-
բաժինը հրաման ստացաւ անյապաղ յար-
ձակվել Ալեմուսկի վրա: Հեռակա զօրաբա-
ժինը և լեւնային մարտկոցը ճանապարհ ըն-
կան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴ, 30 սեպտեմբերի: Պետա-
կան բանկի 5% տոմսը առաջին շրջանի
արժէ 96 ր. 75 Կ., երկրորդ 95 ր. 62 Կ.,
երրորդ 95 ր. 62 Կ., չորրորդ 95 ր. 62 Կ.,
ներքին 5% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 334 ր. 50 Կ., երկրորդ 229 ր.
50 Կ., արեւելեան 92 ր. 87 Կ., ոսկի 8 ր.
22 Կ.: Ռուսաց 1 լուրը Լօնդօնի վրա արժէ
24¹/₃₂ պէնս, ռուսաց 100 լուրը Գերմա-
նիայի վրա արժէ 204 մարկ, Փարիզի վրա
252 ֆրանկ: Տրամադրութիւնը ամուր է:

ԼՕՆԻՍ, 30 սեպտեմբերի (12 հոկտեմ-
բերի): «Daily News» լրագիրը հաղորդում
է, որ Հնդկաստանի կառավարութիւնը հարցը
քննելուց յետոյ հրաժարվեցաւ Ալեմուսկի
վրա յանկարծակի յարձակվելու մտքից, որով-
հետեւ հոկտեմբերի ընթացքում անկարելի
է իրազօրեւել պատերազմի նախնի պրօքստ-
մը: Մեծ պատրաստութիւններ են տեսնվում
նոյեմբերի համար:

ԼՕՆԻՍ, 30 սեպտեմբերի (12 հոկտեմ-
բերի): «Times» լրագիրը հաղորդում է հե-
տեւեալը. «Ռուսաց դեսպան իշխան Լօրանով-
Բօտոսկի յայտնեց Սալֆեա-փաշային, որ
ռուսաց զօրքերը կը մնան Ագրիանոօզի մէջ
մինչև մի դաշնագիր կապվել, որ պարունակ
իր մէջ այն կէտերը, որոնց Բերլինի կոնգրէ-
սը չէ քննել:

Կ. ՊՈԼԻՍ, 30 սեպտեմբերի (12 հոկտեմ-
բերի): Բ. Գուռը պատրաստեց մի շրջաբե-
րական, որով առաջարկում է փոխել Բերլինի
դաշնագիրը Նովի-Բազարի աւստրիական զօր-
քերով գրաւելու կէտի վերաբերութեամբ: Բ.
Գուռը յայտնում է, որ այդ երկրի աւստ-
րիական զօրքերով գրաւելու վտանգաւոր է ի
նկատի առնելով ազգաբնակչության վերին
աստիճանի գրգռումը: Բ. Գուռը առաջար-
կում է ապագովել բնակիչների անվտանգու-
թիւնը:

ს ა მ ს ა რ ა ნ ი ბ ი ნ ე ნ ბ რ

ՀԱՐԱՎԱՌՈՐ Է մի տուն, որի մէջ տեղաւորվի թիֆլիսի գրեւոր պոլիգրաֆիայի, նրա կանցելարիան և հրաշք գունդը իր սայլերով: Տունը պէտք է լինի բաղաձիգ կենտրոնում, պէտք է ունենայ ակոս 36 ձիաների համար, նոյնպէս մեծ բակ և յարմարաւոր մուտք:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
Երանց տունը յիշեալ բնակարանի համար տալ ցանկացողներին հրաւիրում է մինչև նոյեմբերի 5 յայտնել վարչութեանը տան վարձի մասին մանրամասն պայմանները:

1-3

ՄԵՏԱՔՍԵՆԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՂԱՋԻՆ
ԹՈՎԱՄԱՆ ԽԱՆԴԱՄԻՐՈՎԻ (նախկին ԽԱՂԱ-
ԹՈՎԻ) տեղափոխված է վերամիջովայայ փողոցի վրա գտնվող խոտրոնի տանից Երևանեան հրապարակի վրա ԽԱՂԱՋՈՎԻ տանը, թիֆլիսի փողոցաշինարար ընկերութեան շինութեան տակ: Յայտնելով որ մասին թիֆլիսի հասարակութեան, մեծայայտ եմ որ նա իր այցելութիւնները չի պակասեցնի իմ մագաղիցի, հաւատացած լինելով, որ ինձանից դուրս եկած աղբանքները լաւ յատկութիւններ ունեն և զները շատ չափաւոր են:

3-6

МАГАЗИНЪ шелковых товаров
ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій
ХАЛАТОВА) перемѣщенъ съ Велями-
новской улицы дома Хосроева на Әри-
ванскую площадь въ домъ ХАРАЗОВА,
подъ Тифлисскимъ обществомъ взаимна-
го кредита. Объявляя о семъ Тифлис-
ской публикѣ лыцу себя надеждою, что
она не оставитъ своимъ посѣщеніемъ мой
магазинъ съ тою увѣренностью, что от-
пускаемые мною товары будутъ доброче-
ственные и цѣны самыя умѣренныя.—

3-6

ԿՈՎԱՍՏԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՐՕՏԱՆ
(учебная рота) հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել բոսայի մէջ ծառայողների համար հարկաւոր եղած ՄՍԻ ԵՒ ՄԻՒՍ ՄԹԵՐ-
ՔՆՆԵՐԻ ՀԱՍՏԵՆԵԼԸ: Գանկացողները հրաւիր-
վում են աճուրդին ներկայ լինելու համար բո-
սայի զօրատուներ, ինչպէս նաև ուսումնարանի մօտ, սեպտեմբերի 25-ին առաւօտեան 10 ժա-
մին:

Լ յ յ տ ե ն ա լ

«ՆԱԽԼՊԱՇԱՐԱՐՈՒՆԵՐ»

Անունով մեր աշխատատեղեան I հա-
տորը, որ պարունակում է իր մէջ մեր
կենտրոն տունը 600-ից աւելի նախապա-
շարութեան: Գինն է 50 Կ:

Կարելի է ստանալ հետեւեալ հասցեով.—
«Въ Тифлисѣ.—Кавказская книжная тор-
говля З. П. Гракурова.»

Յ. Նազարեանց

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում
է Ս. Մանդրինսկիի հետեւեալ աշխատու-
թիւնները:

1) Ն ա հ ա պ ե տ ա կ ա ն և հ ա յ ը ն ի
ա շ խ ա ր հ, երրորդ տարվայ ուսումը և
ընթերցմունք: Գինն է 65 Կ:

2) Հ ա մ ա ո տ մ ա ն կ ա վ ա ր ժ ու
թ իւ ն: Գինն է 1 ր. 50 Կ:

5-6

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի
հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին
յանձն առնել տալ դպրոցի որդեգիրներին կո-
չիկներ: Այս մասին նշանակած է աճուրդ (ա-
ռանց կրկնաճուրդ) հոգաբարձական խորհրդա-
րանում սեպտ. ամսին 27-ին, երեկոյեան 8
ժամին: Պայմանները մասին կարելի է տեղեկա-
նալ դպրոցի դիւանատան մէջ ամեն օր, բացի
կիրակիէից և տօներէից, ցերեկվայ 10-ից մինչև
12 ժամ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ նոյեմբերի 18-ին ներկայ տար-
վայ իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց
կրկնաճուրդի Մնացականեան կամուրջի մօտ
Քուռ գետի վրա գտնվող երկու պարօնների
պահելը կապալով տալու համար երեք տարի մա-
մանակով:

1-2

ԲԱՐԱՇՈՒԻՍ «ԹՈՒՍԱՍՏԱՆ» ՀԱՆՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԵԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՄԵԲԱ
ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԱԶԻՍՏԱՆ—ՀԱՆՏԻՑ

Ստվում է ՀԵՆՏԻՑԻ ՊԱՎԼԻԹՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՁ ՎԱԳՐԱՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԴԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈԳՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱԿԻ
ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԵԿՈՎ:

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրու-
թեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր ասպնաճանքով, առաճանքով,
հասնելովներով և յօդաւածներով լրացրած: Գինն է 35 Կոպէկ: Գումարով առնողներին
զեջուան կը լինի:
2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր
պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած: Գինն է 40 Կոպ.:
3. Գումարով առնողներին զեջուան կը լինի:
4. Մանթիլթիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են թիֆլիսի թեմի պ. թեմ. վե-
րատեսչից իրեն սկզբնական դասագրքը հայոց լեզուի իր ձեռքի տակ եղած բոլոր ուսում.
նարաններում: Ազգա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրեթէ
ամենում, նմանապէս և միւս թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում են
բացառապէս Կենտրոնական գրաւաճառանոցում: Մայրենի լեզուի Գ. և Գ. տարին
պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵԼԵՈՒՄ)

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը՝

Բ. Կ.

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տպ. — 35
 2. բ. տարի չորրորդ տպ. — 40
 3. Գ. և Գ. տ. երկր. տպ. — 70
 4. Ղ. Սղայեանի՝ Ուսումն. Մայրենի լեզուի, երրորդ տպ. — 15
 5. Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ. — 50
 6. Գ. արքեպ. Ա. յազեան՝ Նախակրթանք զբարար լեզուի մ. ա. — 40
 7. Տէր-Ղևոնդեանի՝ РУССКОЕ СЛОВО — 35
 8. Արծրանի՝ Հայոց պատմութիւն երկրորդ տպ. — 60
 9. Հատընտիր ընթերցուածք ի մատենադրաց նախնեաց՝ հանգիւրձ
ճանթութեամբ Վիէննա Թոռնեան՝ 4 —
 10. Թորոս Լևոնի պատմական վէպ ազգ. կենտրոն 1 —
- Այս օրերս կը ստանանք Վենետիկից Առաջին բաւարարները, Հայաստանի քարտէզներ
և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը:

ՀՈԿՏՄԲԵՐԻ 3.			Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Ց Ց			ԹԻՖԼԻՍ. 1878.		
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ			ՀԵՌԱԳԻՐ			ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ		
(Հղումները 2-ին)			ՓՈՒՅԻ			ՓՈՒՅԻ		
Ու Կ Ի Ն (պոլիգրաֆիայում)	8	25	Կովկասի և Ան-	Փ. Թիֆլիսից	մինչև Գ. Թիֆլիսի	Ամեն տեսակ թէ նա-	Հիւանդների ընդունելու-	«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1520	—	դիպկանի քա-	(Համապարփողների գնացքը) 9	ժամին 21 րոպէ առաւօտեան:	մակներ, թէ քաղաքի և	թիւնը 8-ից մինչև 10 ժամը	— ԵՐԵՒԱՆ. Հին-Գարեկա-
Հին 20 Կ. 72 պր. 1000 մ.	1285	—	ղաքները	Մինչև Միխայիլ օվո (խառն	գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18	թէ ծանր փոստ ամեն տեղ	յուշիսի 1-ից մինչև սեպ-	Ստացանք նամակը: Կը տպե-
Վերջինի 50% առաւիյ փո-	—	—	Ռուսաստան	—	—	ուղարկելու, ընդունվում	տեմբերի 1-ը:	կը տպե-
խառնութեան տոմ. 100 մ.	232	—	Աւստրիա	—	—	են ամեն օր, առաւօտեան	Նոյնութեամբ միայն ձեռք փո-	խնդր. թատրոնի մասին մի յու-
Երկրորդ 50% վերջինի 100 մ.	228	—	Անգլիա	—	—	8 ժամից մինչև և կէսօրից	հիւանդութիւններ, Բուհա-	սահաւաճէ. Ներկայացումներն
Մարտի կուրսը 251/2 —	100	—	Ֆրանսիա	—	—	յետոյ 3 ժամից մինչև 7:	բեանց վերաբուժական և	է, ինչպէս բերը ժամանակով
Լոնդոնի կուրսը Օդեսայի	—	—	Յիւստինիա	—	—	կեսի կիրակի օրերը հաւա-	կանացի հիւանդութիւն-	լաւ կը լինի:
վրա	9	97	—	—	—	րակ նամակներ մինչև 10	ներ 10-ից մինչև 11 ժամ:	— ՍԻՄՖԵՐՈՊՈԼ. Գ. Մ. Ստա-
Վենայի կուրսը ամէ 121 զ.	100	—	—	—	—	ժամ առաւօտեան և 3-7	Ներքաւ թիւ. վերջինի	ցանք նամակը: Կեռ չեք կար-
Դարեւի բարաթը.	5	70	—	—	—	երեկոյեան.	ներքին 5. Բախտ վենե-	դացի:
Առեւտրական բանկի աղ-	—	—	—	—	—	Արտաստանից և	րական և կաշու 5. Ա. Բա-	ցանք նամակը: Կեռ չեք կար-
թիւն 200 մ.	315	—	—	—	—	Փոստ ստացվում է թիֆ-	նեքի 5. և մանկաբարձու-	դացի:
Փոթի թիֆլիսեան երկա-	—	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	թեան. Պէտեւով աչքի 5.:	— ԵՐԵՒԱՆ. Ա. Եր. Գրեգէ
թուղու ակցիան 125 մ.	102	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Չորեքշաբթի. վերջինի	վերջինի հայ ներկայացման մա-
Շաքարը բրոզկո.	7	60	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	սին մանրամասնաբար:
միւս տեսակը.	7	45	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային և ջրային 5.:	— ԹԻՖԼԻՍ. Գ. Չ. Հեռեալ
շաքարաւազը.	6	40	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	համարում կը տպենք ձեռ նա-
տրանզիտը.	6	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	մակը:
մաքուր վաճարած	11	50	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Չորեքշաբթի. վերջինի	— Կ. ՊՈԼԻՍ. Հ. Կարդացէ
Բաժնաւոր երկանու. Ա-	—	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	վերին պատասխանը, Հնոր-
մերկայի սերմից.	8	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային 5. Բախտ	հակալ ենք ձեռ աշխատու-
Միւս տեսակը հին սերմից.	7	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	թեան համար. Այդ տեղի անց-
Բուրդը թուրքի.	7	25	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	բերը թէ մեղ և թէ մեր ընթեր-
մերկայի սերմից.	4	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային 5. Բախտ	ցողների համար շատ հետաքր-
Աւիւր Երազայու.	2	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	բիր են:
Երևանի.	—	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	— ՎԱՐՍ. Գ. Ն. Ստացանք
Գարին.	1	30	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային 5. Բախտ	ձեռ երկրորդ նամակը:
Մամբ ընամարայի (сгар.)	12	40	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	
Մեծ քաղաքի յուշակայ.	210	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Ա. Բախտ	
Կախեթ ունի.	140	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային 5. Բախտ	
Կոնստանտնուպոլի (սոս.)	45	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	
Յիւստինիա (լաւոր) Ագու-	60	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	
լեաց	26	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	կրծքային 5. Բախտ	
Կոֆէն մօկօր.	22	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	
լիւանի.	22	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	չէվ ներքին 5. Բախտ	
մարտիկայինը	17	—	—	—	—	լիս ուսումնից Թիֆ-	Հին քաղաքի. վերջինի	